ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ << ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԿԵՆՏՐՈՆ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Խոյի համայնքապետարանը հայտարարում է Խոյ համայնքի <<Մշակույթի և սպորտի կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ) տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար բաց մրցույթ (այսուհետև՝ Մրցույթ):

ՀՈԱԿ-ի տնօրենը՝

-Առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ:

-ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի և համայնքի ղեկավարի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները:

- Տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր:

- Աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին՝ օրենքով սահմանված կարգով: Լիազորված մարմնի համաձայնությամբ նրանց նկատմամբ կարող է կիրառել խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր:

- Բանկերում բացում հաշվարկային հաշիվներ

- Նախագահում է կոլեկտիվի նիստերն ու ժողովները

- Կատարում է աշխատանքի բաշխում աշխատողների միջև

-Վերահսկողություն է իրականացնում Կազմակերոպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ:

- Իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ չհակասող և Կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

Թափուր պաշտոնի համար նշանակված մրցույթը կկայանա 2023թ. օգոստոսի 29-ին ժամը 11:30-ին:

Մրցույթին մասնակցելու դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2023թ. օգոստոսի 21-ը, մինչև ժամը 18:00-ն:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 09:00-13:00 և 14:00 - 18:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Եթե փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա վերջնաժամկետի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել Խոյի համայնքապետարանի աշխատակազմ /մ. Արմավիր համայնք Խոյ, գյուղ Գեղակերտ Մ. Մաշտոց 30, հեռ. 060-888-999/ կամ Արմավիրի մարզպետարան /ք.Արմավիր Աբովյան 71/:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կանցկացվի Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի վարչական շենքում (գ.Արշալույս 20 փողոց 5 շենք):

Դիմող քաղաքացիները Խոյի համայնքապետարան (ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղ Մ. Մաշտոց 30) կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան (ք.Արմավիր, Աբովյան 71) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1)դիմում

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի

3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին

4) ինքնակենսագրություն

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացված փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն.

2) համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

3) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:
5. Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝
1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
2) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
3) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.
4) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
5) զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել.
6) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում սույն կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են.
7) 65 տարին լրացած քաղաքացիները:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝

1) թեստավորման (հարցաշարն https://khoy.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=337)

2) հարցազրույցի:

Հարցաշարի փուլի համար նախատեսված հարցաշարը կազմված է հետյալ բնագավառներից՝

<<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք, հոդվածներ՝ 2, 3,4,8,9,11,12,14,16,17,22,23,24,25,25.1 (հղում՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=14986)

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք 5,6,14,17, 18,92,,110,130,137,166,171,178,195 (հղումն՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=150003)

<<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք, հոդվածներ՝ 2,7,9,10,11,12,14,15,18,26,30,31,37,40,46,47(հղումն՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=150073)

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք, հոդվածներ՝ 2, 3, 5, 6, 13, 14, 16, 17, 18, 19, 22, 25, 26, 35, 46, 83 (հղումն՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=150060)

<<Մշակութային օրենսդրության հիմունքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք հոդվածներ՝ 2,4,6,20,24(հղումն՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=19304)

<<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածներ՝ 1,2,3 (հղումն՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=13851)

Խոյի համայնքապետարան